Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y
օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ
ISSN 1829-2224
17/4113/ 1 փետրվարի 2012 չորեքշաբթի

## Ա

## «Խոսք տանել-բերելու» արվեստը

Շուտով ընտրություններ են լինելու, իսկ դա նշանակում է, որ հակամարտող ուժերը իրար դեմ կիրառելու են այն, ինչ «գիտական լեզվով» կոչվում է «PR տեխնոլոգիաներ», իսկ ավելի կենցաղային մակարդակում կրում է «մուտիլովկա» անունը: Դա իրականում առանձնապես բարդ եւ մտավոր ճիգեր պահանջող գործ չէ՝ այդ մեթոդներով կարելի է կռիվ գցել ընտանիքում, աշխատանքային կամ ցանկացած այլ կոլեկտիվում: Մոտենում ես X-ին եւ ասում ես՝ «գիտես, Y-ը քո մասին այսինչ բանն է ասել»: Այդ X-ը՝ տաքարյուն կովկասյան բնավորություն ունենալով, բնականաբար, նույն պահին փրփրում է եւ Y-ի մասին մի երկու «քաղցր բառ» է ասում, որը, բնականաբար, փոխանցվում է Y-ին: Դրանից հետո այդ երկու անձերի փոխհրաձգությունն ապահովված է: Դա կենցաղում անվանում են նաեւ «խոսք տանել-բերել»: Կուսակցությունների, քաղաքական ուժերի դեպքում ցանկացած միջին մակարդակի լրագրող դա կարող է անել հեշտությամբ, որովհետեւ մեր քաղաքական գործիչները այնքան ինքնավստահ են, ինքնասիրահարված եւ իրենց այնքան են դրել «դուխով տղերքի» տեղ, որ ցանկացած նման խայծ կուլ են տալիս:

Մի խոսքով՝ մոտակա ամիսներին ինչպես կոալիցիայի, այնպես էլ մնացած իշխանամետ եւ ընդդիմադիր կուսակցությունների ներսում նրանց հակառակորդները փնտրելու են «ականներ», «ճեղքեր» եւ «պառակտումներ»: Քաղաքական շահագրգռվածությունն այստեղ ակնհայտ է՝ մրցակցի իրական կամ թվացյալ պառակտումը քարոզչության համար լայն հնարավորություններ է ստեղծում: Ըստ էության, նման երեւույթներ գտնելն այնքան էլ բարդ չէ, քանի որ ցանկացած խումբ, այդ թվում՝ կուսակցություն, կազմված է տարբեր կենսափորձի, աշխարհընկալման եւ խառնվածքի մարդկանցից: Լրագրության տեսանկյունից նման հակասությունների մասին նյութերը հետաքրքրությամբ են կարդացվում՝ դա մի քիչ սերիալի նման է, որտեղ հաջորդ սերիան X-ի կամ Y-ի պատասխան խոսքն է, եւ դա տեսականորեն կարող է տեւել մի քանի ամիս:

Պարզապես երբ մենք՝ լրատվամիջոցներս, կենտրոնանում ենք միայն այդ խարդավանքների վրա, նախընտրական շրջանում բարձրացվող մնացած՝ ավելի էական խնդիրները կարծես նահանջում են երկրորդ պլան: Ի վերջո, երկրի առաջընթացն ապահովվելու է ոչ թե ՀՀԿ-ԲՀԿ կամ, ասենք, ՀԱԿ-ի կամ «Ժառանգության» ներսում եղած հակասություններով, այլ օրենսդիր իշխանության կողմից որդեգրված քաղաքականությամբ՝ հաշվի առնելով նաեւ, որ Սահմանադրությամբ այդ իշխանությանը տրված են մեծ իրավասություններ: Սակայն այդ իրավասությունները որեւէ դեր կարող են խաղալ նորմալ, աշխատող խորհրդարանի դեպքում:

...Երբ աշխատավայրում որեւէ մեկն ինձ մոտ է փորձում ցուցադրել իր «խոսք տանել-բերելու» արվեստը, ես սովորաբար ասում եմ. «Թողեք անիմաստ խոսակցություններն ու անցեք գործի»:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Հայ կամավորականների շարժումը» ՀԱԿ-ի նախընտրական դաշինքո՞ւմ է

*Օրերս կայացած քաղխորհրդի նիստում Հայ ազգային կոնգրեսը որոշում էր ընդունել, որ ՀԱԿ-ն առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու է ՀԱԿ անդամ 18 կուսակցությունների եւ հասարակական-քաղաքական նախաձեռնությունների դաշինքով: ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանն էլ արդեն պաշտոնապես հրապարակել է ՀԱԿ քաղխորհրդի որոշումը: Այս առնչում հետաքրքիրն այն է, որ ՀԱԿ անդամ 18 կուսակցությունների եւ հասարակական կազմակերպությունների ցանկում է նաեւ «Հայ կամավորականների շարժում» հասարակական-քաղաքական նախաձեռնությունը, որի համակարգողն է Ժիրայր Սեֆիլյանը: Aravot.am-ի հետ զրույցում պատասխանելով հարցին՝ արդյոք մասնակցե՞լ են հիշյալ քաղխորհրդի նիստին եւ որոշման կայացմանը, Ժիրայր Սեֆիլյանն ասաց, որ իրենք վաղուց արդեն չեն մասնակցում ՀԱԿ-ի աշխատանքներին: Այդ դեպքում ինչո՞ւ են Կոնգրեսում շարունակում իրենց անունից եւս հանդես գալ, Սեֆիլյանը պատասխանեց. «Այդ հարցն իրենց ուղղեք»: Այս առիթով aravot.am-ը մեկնաբանություններ խնդրեց նաեւ ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանից: Վերջինս հստակեցրեց. «Այդ նախաձեռնության ստեղծման օրվանից Սամվել Հարությունյանը եղել է «Հայ կամավորական համախմբում» նախաձեռնության ներկայացուցիչը ՀԱԿ քաղխորհրդում, մշտապես մասնակցել է բոլոր նիստերին եւ տվել իր համաձայնությունը: Այնպես որ՝ հարց չի կարող լինել»: Դիտարկմանը՝ իրենք իրար մե՞ջ խնդիր ունեն, Զուրաբյանը հակադարձեց. «Այդ առումով ոչինչ ասել չեմ կարող»:*





## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «Տղա ջան, շատ շուտ կհիասթափվես»

«Ոչ թե «լեզու չգտա», այլ ՕԵԿ-ի հետ իմ տղան էր փորձում: Իր ընկերները այդ կուսակցության անդամ են: Ես էլ ասեցի՝ տղա ջան, շատ շուտ կհիասթափվես, որովհետեւ քաղաքականությունը չի պարունակում ազնվություն: Դու ջահել տղա ես, չես կարա: Ինքը փորձեց հարաբերությունների մեջ մտնել ու կարճ ժամանակ հետո հիասթափվեց, ասեց, որ ես ճիշտ էի նկատել»,- «Առավոտի» հարցին՝ մի քանի ամիս առաջ փորձում էիք ՕԵԿ-ի հետ գործունեություն ծավալել, ինչո՞ւ լեզու չգտաք, պատասխանեց էջմիածնեցի նախկին պատգամավոր Հակոբ Հակոբյանը: «Մենք հազիվ ենք յոլա գնում էդ ամեն տեսակի քծնանքներին, իրար գլխի սարքելուն, էդ ազնիվ երեխեքը որտեղի՞ց կարողանան»,- ասաց մեր զրուցակիցը:

Կարդացեք էջ 3:

### Դարձյալ կառաջադրվի՞ ՀՀ նախագահի եղբայրը

Aravot.am-ը ՀՀԿ պատգամավոր Արտակ Զաքարյանին հարցրեց՝ ճի՞շտ են լուրերը, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այս ընտրություններին չի ուզում եւ թույլ չի տալիս, որ իր եղբայրը՝ Սաշիկ Սարգսյանը, մասնակցի, որովհետեւ այդ մասին մամուլում արդեն քննարկումներ կան: Նա չցանկացավ որեւէ կերպ մեկնաբանել՝ ասելով, որ մամուլը երբեմն բաներ է գրում, որոնց պետք չէ մեկնաբանություն տալ. «Գրեք «no comment», ու վերջացավ: Ալեքսանդր Սարգսյանը կհետաքրքրի միայն իր ընտրողներին, իսկ իր ընտրողների համար նա շատ բան է արել»: Մեր դիտարկմանը՝ գուցե մե՞նք էլ ենք նրա ընտրազանգվածը եւ ուզում ենք իմանալ՝ գնալո՞ւ է նա ընտրությունների, թե՞ չի գնալու՝ Արտակ Զաքարյանը պատասխանեց. «Ես չգիտեմ դա, կուսակցության որոշելիքն է»:

### Սարկոզին չի՞ կարող ստորագրել հայանպաստ օրենքը

«Հնարավոր է՝ Նիկոլա Սարկոզին նախագահի ընտրությունների գնա այդպես էլ օրենքը չստորագրած»: Երեկ «Ա1+»-ին ասաց ՀՅԴ Հայ Դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը: Նա հաստատեց տեղեկությունը, որ Ֆրանսիայի Սենատի 72 անդամներին հաջողվել է հավաքել անհրաժեշտ 72 ստորագրությունը եւ մտնել Սահմանադրական խորհուրդ: Կիրո Մանոյանը տեղեկացրեց նաեւ, որ օրինագիծը հակասահմանադրական ճանաչող 72 պատգամավորներից 62-ը Սենատի ծայրահեղ ձախ անդամներն են՝ համայնավարներ, մարքսիստներ եւ նախկին կանաչներ: Մնացածը իշխող կուսակցությունից են եւ սոցիալիստներ:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 11-ին, «Հենարան» ակումբի հյուրն է «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Վարդան Բոստանջյանը:

### Եղանակ

Երեւան -7 +5, Շիրակ -17 +1, Կոտայք -17 +1, Գեղարքունիք -17 +1, Լոռի -12 +2, Տավուշ -9 +4, Արագածոտն լեռներ -17 +1, Արագածոտն նախալեռն. -7 +5, Արարատ -8 +5, Արմավիր -8 +5, Վայոց Ձոր լեռներ -16 +2, Վայոց Ձոր նախալեռն. -9 +6, Սյունիքի հովիտներ -8 +7, Սյունիքի նախալեռներ -10 +2

## Ինչու ԲՀԿ-ականները ներկա չէին բանակի 20-ամյակի խնջույքին

ԲՀԿ պատգամավոր Վարդան Բոստանջյանը չի սիրում ռեստորանների հավաքույթները: Aravot.am-ի հարցին՝ ինչո՞ւ է մերժել «Փարվանա» ռեստորանում հայկական բանակի կազմավորման 20-ամյակի առիթով կազմակերպված հավաքույթին մասնակցել, Վարդան Բոստանջյանը պատասխանեց. «Իմ տեսակն էնպիսին է, որ այդքան հակվածություն չունեմ ռեստորանների շուրջը գտնվելու»:

Նրա խոսքերով՝ կարեւորն այն է, որ թե ինքը, թե իրենց կուսակցության ներկայացուցիչները մասնակցել են Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կազմակերպված բանակի օրվա տոնակատարությանը. «Մինչեւ անգամ տեղադրությունը գիտեմ՝ վարչապետ, դատախազ, պարոն Ծառուկյան՝ իրենց կանանց հետ»:

Թե ինչու են ԲՀԿ այլ հրավիրյալներ էլ հրաժարվել «Փարվանա» գնալուց, պարոն Բոստանջյանը բացատրեց. «Ոչ թե հրաժարվել է կոչվում, այլ պարզապես ժամանակ չեն ունեցել գնալու, պարտադիր չէր՝ մասնակցեինք: Միգուցե համընկել է բոլորի բացակայությունը, միտում չկա, առնվազն դա շատ փոքր պահելաձեւ կլիներ: Ի՞նչ կնշանակեր այդպիսի դեմարշը»:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱԿ-ը Տավուշում դեռ չունի մեծամասնականի թեկնածուներ

Տավուշի մարզում լուրեր էին շրջանառվում, որ Հայ ազգային կոնգրեսը մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրություններում մարզի թիվ 40 ընտրատարածքում մտադիր է առաջադրել ՀՆշակյան կուսակցության ղեկավար Լյուդմիլա Սարգսյանի թեկնածությունը: Վերջինիս հայրը ծագումով Նոյեմբերյանի տարածաշրջանի Ոսկեվան գյուղից է: Հետո այդ լուրը հերքվեց: Խոսակցություններ շրջանառվեցին, որ Կոնգրեսը մտադիր է մեծամասնական ընտրակարգով Տավուշի մարզի 2 ընտրատարածքներում առաջադրել մարզում բնակվող, բնակչության շրջանում հարգանք եւ ճանաչում ունեցող ընդդիմադիր անձանց:

Հայ ազգային կոնգրեսի ակտիվիստ Գուրգեն Աստրյանն ասաց, որ ՀԱԿ-ը միացել է 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգի անցնելու ՀՅԴ-ի եւ «Ժառանգության» առաջարկին, փետրվարի 17-ին սկսվող իր հանրահավաքներով պնդելու է այդ պահանջը եւ մարզում մեծամասնական ընտրակարգով նախանշած թեկնածուներ չունի:

## Ճանապարհը վտանգավոր է

Նոյեմբերյան-Իջեւան ճանապարհը թեեւ երթեւեկելի է, սակայն սառած է եւ վտանգավոր: Երեկ, ժամը 15-ի սահմաններում, Սարիգյուղի մուտքի մոտ կանգնած էր վրացական համարանիշներով բեռնատար, որը սահելով՝ ճանապարհից դուրս էր ընկել: Վրացի վարորդ Թամազն ասում էր, որ մեկուկես ժամ այդտեղ «լոված է»: Նա Փոթիից 15 տոննա սանտեխնիկա էր տեղափոխում Երեւան: Կիրանց-Ոսկեպար շրջանցիկ ճանապարհում Ոսկեպարի տրակտորիստները անիվներին շղթա հագցրած «Բելոռուսների» միջոցով քաշում էին այն մեքենաները, որոնք լովել-մնացել էին: Ճանապարհը սառած եւ վտանգավոր էր նաեւ Իջեւան քաղաքում: Երեկ Իջեւան քաղաքի Երեւանյան փողոցում «Ժիգուլին» բախվել է «Վորլդ Վիժն» կազմակերպության «Նիվայի» հետնամասին:

ՌՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# ԲՀԿ-ՀՀԿ փոխհարաբերությունները հասարակությանը չեն հետաքրքրում

## Դրանով հետաքրքրված են բացառապես լրագրողներն ու քաղաքական ուժերը

Հայաստանյան մամուլն ու կայքերն այս օրերին հեղեղված են ՀՀԿ-ԲՀԿ կոալիցիոն գործընկեր կուսակցությունների փոխհարաբերությունների վերաբերյալ հրապարակումներով՝ «չոր» տեղեկատվությունից մինչեւ վերլուծականներ: Գրեթե բոլոր լրատվամիջոցների լրահոսում անպայման իրենց տեղն են գտնում կուսակցությունների համամասնական ցուցակին առնչվող տեղեկատվություն եւ ապատեղեկատվություն, թեեւ ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերն են շարունակում պնդել, թե իրենք համամասնական ցուցակի ձեւավորմանը դեռ չեն էլ հասել կամ դեռ չեն ձեւավորել: Բայց արդյոք այս հարցադրումներն այսօր քաղաքական թիվ մեկ կարեւորության խնդիրնե՞ր են կամ վճռորոշ նշանակություն ունե՞ն առաջիկա խորհրդարանական ընտրությունների համատեքստում, եւ ընդհանրապես՝ արդյոք լրատվամիջոցներում պարբերաբար քննարկվող այս հարցերը մեր հանրությանը հետաքրքի՞ր են:

Քաղաքագետ, «Ազատ դեմոկրատներ» կուսակցության փոխնախագահ Անուշ Սեդրակյանի դիտարկմամբ՝ ոչ, հասարակությանը հետաքրքիր չեն:

«Եթե Հայաստանում իրականացվեր քաղաքականություն այդ բառի իրական իմաստով, ապա բոլոր այս՝ դաշինքների, համամասնական ցուցակների, ՀՀԿ-ԲՀԿ հարաբերությունների շուրջ տարվող խոսակցություններն ու բանավեճերը, որոնք մամուլում անընդհատ շահարկվում են, ուղղակի չէին լինի: Մարդկանց կհետաքրքրեր երեք հարց՝ ո՞նց են լուծվելու սոցիալական խնդիրները, որովհետեւ դա թիվ մեկ խնդիրն է, ինչպիսի՞ արտաքին քաղաքականություն կվարի նորընտիր խորհրդարանն ու ինչպե՞ս են լուծվելու հակամարտությունները, կոնկրետ դեպքում՝ Արցախի հիմնահարցը: Մինչդեռ այսօր ես այս երեք հարցի շուրջ անհանգստություն չեմ տեսնում: Միայն տեսնում եմ ցուցակային, որը քաղաքականության հետ կապ չունի»,- ասաց քաղաքագետը:

Նա տարակուսեց նաեւ ԲՀԿ-ՀՀԿ շուրջ ստեղծված աժիոտաժի առնչությամբ, այդ կուսակցությունների՝ առանձին-առանձին, թե միասնական ցուցակով ընտրություններին մասնակցելու շուրջ. «Ինձ շատ հետաքրքիր է՝ ի՞նչը կփոխվի դրանից: ԲՀԿ-ականներն ու ՀՀԿ-ականները այդ հարցը պիտի քննարկեն իրենց կուսակցական պլատֆորմի տեսանկյունից: Բայց ցայսօր թե՛ վեճերում, թե՛ փոխադարձ կսմիթներում եւ թե՛ համատեղ հայտարարություններում նման նշույլ ես չեմ տեսնում»:

Անուշ Սեդրակյանի կարծիքով՝ այս հարցադրումները ԶԼՄ-ներում շրջանառելը պայմանավորված է լրագրողների, բայց ոչ՝ հասարակական հետաքրքրությամբ: Թե ինչո՞ւ՝ պատասխանեց. «Դա մամուլի հետաքրքրությունն է, ու ինձ թվում է, թե մամուլի ներկայացուցիչներն այդ հարցին ավելի լավ կարող են պատասխանել: Հասարակությանը դա բացարձակապես չի հետաքրքրում: Հասարակությանը հետաքրքրում է, թե ինչպիսի իրավական, քաղաքացիական եւ սոցիալական երաշխիքներ է ունենալու ինքը, եւ արժե՞ արդյոք ապրել Հայաստանում, թե՞ ոչ»: Քաղաքագետի դիտարկմամբ՝ մասնավորապես ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի առանձին-առանձին կամ միասնաբար հանդես գալը քաղաքական դաշտը որեւէ փոփոխության ենթարկել չի կարող. «Քաղաքական դաշտի փոփոխության միակ երաշխիքը քաղաքական գործիչների մտածողության փոփոխությունն է»:






Նույն հարցադրումներին անդրադառնալով՝ «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի նախագահ Ստեփան Դանիելյանը եւս ասաց, թե ԶԼՄ-ներում քննարկվող այդ հարցադրումներն ընդհանրապես կարեւորություն չեն ներկայացնում: «Ուղղակի նրանց համար, ովքեր դա քննարկում են՝ մամուլն ու քաղաքական շրջանակները, դա կենսական նշանակության հարց է, բայց հասարակության հետ որեւէ առնչություն չունի: Հասարակությանը չի հետաքրքրում, թե ով հավաքվեց ու ինչ քննարկեց»:

Փորձագետի կարծիքով՝ այդ հարցադրումները կենսական անհրաժեշտություն են լրատվամիջոցների համար, որպեսզի նախ՝ լրագրողները նյութ ունենան գրելու, երկրորդ՝ լրատվամիջոցները ներգրավված են քաղաքական որոշակի գործընթացների մեջ. «Ես դա որպես մեղադրանք չեմ ասում, ուղղակի կյանքն է այդպիսին, եւ, բնականաբար, այդ թեման նրանց հետաքրքիր է:

Քաղաքական գործիչներին էլ հետաքրքիր է, որովհետեւ նրանց մի զգալի հատվածը՝ հիմնականում իշխանական դաշտի ներկայացուցիչների մասին է խոսքը, կախված են կառավարման համակարգից եւ այդ ոլորտում կենսական շահեր ունեն: Իրենց համար կարեւոր է իմանալ դա, որպեսզի իրենց «ճիշտ պահեն»՝ ըստ իրենց շահերի»:

Ինչ վերաբերում է ԲՀԿ-ՀՀԿ փոխհարաբերություններին, ապա Ստ. Դանիելյանի համոզմամբ՝ «հասարակությանը դա էլ շատ քիչ է հետաքրքիր, բայց փոխարենը հետաքրքիր է այն մարդկանց, որոնք ունեն շատ կոնկրետ շահեր, ու իրավիճակի փոփոխությունը նրանցից շատերի համար պաշտոնի եւ կյանքի, ունեցվածք ունենալու եւ կորցնելու հարց է: Բնականաբար, դա նրանց համար շատ կարեւոր է: Իսկ հասարակությունը... Հասարակության շահը դեռ ձեւակերպված չէ, եւ կուսակցությունները եւս չեն ձեւակերպել, թե իրե՛նց շահը որտեղ է հատվում հասարակության շահի հետ: Երբ դա լինի եւ մարդկանց համար լինի հասկանալի՝ մենք էլ, որպես հասարակություն, կկողմնորոշվենք, թե ում ձայն տալ, ում համար պայքարել կամ ում համար ընտրություններից հետո ցույցի դուրս գալ ու ընդհանրապես՝ մտածել՝ արժե՞, որ դրա համար մեզ վրա կրակեն, թե՞ ոչ: Գուցե արժե, բայց քանի որ մենք դրա պատասխանը չունենք՝ հասարակությանը այսօր դեռեւս կարեւոր չէ, թե ով որտեղ կհանդիպի եւ ինչ կքննարկի»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# «Երբ Շուշին էինք գրավում, ՀՀՇ-ն ու ՀՅԴ-ն իշխանության կռիվ էին տալիս»

«Մենք անընդհատ ասում ենք՝ հաղթել ենք, հաղթել ենք, բայց ես չեմ իմանում՝ ինչ հաղթանակ: Մենք ունեցել ենք հաջողություն»: Երեկ ասուլիսում խոսելով հայկական բանակի ձեռքբերումների մասին՝ նման կարծիք հայտնեց գեներալ-մայոր, արցախյան պատերազմի մասնակից Արկադի Տեր-Թադեւոսյանը (Կոմանդոս):

Նրա ներկայացմամբ՝ այդ հաղթանակներն ու բանակի ձեռքբերումներն իրականում ժողովրդինն են. «Մենք Շուշի էինք ազատում, իսկ հայերն իրար դեմ զենք էին բարձրացնում. ՀՀՇ-ն ու դաշնակներն իրար դեմ էին կռվում, թե ով է ղեկավարելու Ղարաբաղը: Իշխանության համար կռիվ էին տալիս, մտածում էին ղեկավար մարմիններ ստեղծելու մասին. իրենց դա էր պետք»:

Կոմանդոսի խոսքերով՝ այսօր մարդիկ կան, որոնք պնդում են, թե հաղթանակներն իրենք են ձեռք բերել. «Երբ 20 տարի հետ ենք գնում ու նայում, տեսնում ենք, որ մենք այդ ժամանակ պետություն չունեինք, ունեինք կուսակցություններ, որոնք այդ ժամանակ ավելի շատ խանգարում էին: Մարդիկ կային, որ ասում էին՝ մենք ենք արել, մենք ենք ձեռք բերել: 1918 թվին էլ պետություն չունեինք, բայց էլի ժողովուրդը զենքը վերցրեց՝ պաշտպանեց իր հայրենիքը: Ղարաբաղի ժամանակ էլ՝ շատերը զենք բռնել չգիտեին, բայց գնացին երկիրը պաշտպանելու: Այն ժամանակ վիճակը շատ դժվար էր, Հադրութում գյուղ կար, որ դատարկվել էր, բայց մարդիկ պապական զենքերով անտառներում պաշտպանվում էին, կռվում էին, էլի ժողովուրդն էր պաշտպանում: Դժվար պահից դուրս ենք եկել, մենք հայեր ենք, չէ՞, լավ, վատ՝ էլի հայ ենք, էլի կարող ենք գզվռտվել իրար հետ: Կուսակցություններ ունենք, որ կարան իրար հետ պրոբլեմներ ունենան, բայց հայ ենք, էլի, մի լուծում կգտնենք, բայց թշնամության ցուցանիշ հասարակության մեջ չունենք»:

Արկադի Տեր-Թադեւոսյանի կարծիքով՝ հայկական բանակն ավելի մարտունակ է, քան ադրբեջանականը, իսկ մարտունակության գնահատականը, ըստ Կոմանդոսի, տվել են միջազգային փորձագետները: Պարզապես, գեներալ-մայորի խոսքերով, ադրբեջանական քարոզչությունն ավելի ուժեղ է. «Մեր բանակը փոքր է, բայց ավելի մարտունակ ենք, հավատացեք ինձ: Ադրբեջանը ավելի լավ քարոզչություն ունի եւ ավելի լավ է նայում լրագրողներին ու մեծ գումարներ է ծախսում, որ ուժեղ քարոզչություն լինի: Ամեն ինչ անում են, որ Ալիեւի խոսքերը, որպես շոու, մեզ վրա ազդի, բայց դա բլեֆ է: Նրանց բանակի թիվը մեծ է, ավելի սիրուն հագուստ են հագնում, բայց մեր ռազմական պատրաստվածությունն ավելի բարձր է, մեր զինվորները ռազմական տեխնիկային ավելի լավ են տիրապետում»:

Անդրադառնալով բանակում զինվորների մահվան դեպքերին՝ Կոմանդոսն ասաց. «Ցավոք, այդ նեգատիվ իրադարձությունները ստվեր են գցում մեր հաջողությունների վրա, եւ արդարացում չէ, որ հայտարարում են, թե ամեն տեղ էլ նման բաներ լինում են: Պարզապես բանակում այնպիսի կարգ ու կանոն պիտի լինի, որ երեխաներին երաժշտությամբ ճանապարհեն բանակ, ու լրագրողներն ու հասարակական կազմակերպությունները նման ցավոտ հարցեր չտան»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Առավոտ aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 01.02.2012

# Հակոբ Հակոբյանը «կռիշի տակի» տղա չէ

## Նախկին պատգամավոր, էջմիածնեցի Հակոբ Հակոբյանը կառաջադրվի մեծամասնական ընտրակարգով

- Վերջին շրջանում բանակցում էիք Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակում ընդգրկվելու համար. արդյունքը տվեցի՞ն այդ բանակցությունները:

- Համամասնական ցուցակի վերաբերյալ որեւիցե մարդկանց հետ որեւիցե քննարկում ես չեմ անցկացրել:

- Իսկ մեծամասնական կարգով առաջադրվելո՞ւ եք:

- Մեծամասնական կարգով առաջադրվելու եմ:

- ՀՀԿ-ի հետ համաձայնեցրե՞լ եք: Օրինակ՝ անցած ընտրություններում ՀՀԿ-ն Ձեզ չսատարեց, սատարեց գեներալ Սեյրան Սարոյանին, բնականաբար, նա էլ հաղթեց:

- Գեներալ Սեյրան Սարոյանը միակ թեկնածուն մնաց: Եթե հիշում եք՝ ինձ չգրանցեցին: Դե, եթե մենակ մնաց՝ ո՞ւմ պարտվեր: Ես չեմ մասնակցել անցած ընտրություններին, էնպես որ՝ Հանրապետականը որեւիցե մեկին չի պահել:

- Չե՞ք փորձելու Հանրապետականի «դաբրոն» ստանալ:

- Ես ընտրությունների եմ գնում, ես պետք ա փորձեմ ժողովրդի դաբրոն ստանալ: Ի՞նչ ա նշանակում՝ Հանրապետականի դաբրո:

- Ձեզ համար զաղտնի՞ք է՝ իշխանության հետ լավ հարաբերությունների մեջ եք՝ գործերը լավ են, եթե չէ՝ հարցական է:

- Դե, եթե ժողովուրդը չի ընտրի, ես էլ չեմ դառնա, չեմ աշխատի: Դրա մեջ ի՞նչ կա վատ: Եթե հիշում եք իմ ընտրությունները՝ ես երբեք էլ իշխանությունների ցանկալի թեկնածուն չեմ եղել՝ սկսած 1999 թվականից: Բայց ժողովուրդը գտավ, որ ես ավելի հարմար թեկնածու եմ՝ ինձ ձեն տվեց:

- Երկու տարի առաջ կայացած Էջմիածնի քաղաքապետի ընտրություններում Դուք գեներալ Մանվելի որդու մրցակիցն էիք, այն ժամանակ էլ ասում էիք՝ ժողովուրդը ընտրի՝ կընտրվեմ: Ժողովուրդը չընտրեց: Հիմա վստահություն ունե՞ք, որ կընտրեն:

- Միգուցե ժողովուրդը ինձ գործադիր մարմնում չի ուզում, այլ ուզում է, որ ես օրենդիր մարմնում լինեմ:




- Այն օրենսդրական գործունեությունը, որը Դուք ժամանակին ծավալել եք, կարծում եք, որ այդքան տպավորի՞չ է եղել:

- Ժողովրդի հետ իմ հանդիպումները, շփումները ցույց են տալիս, որ իմ աշխատած տարիները դրական են գնահատվել: Չեմ կարող 100 տոկոսանոց բաներ ասել, դնեմ ինձ գովամ, բայց կարծում եմ, որ դրական եմ աշխատել, եւ ժողովրդի կողմից ընդունվել ա: Ես եղել եմ հասարակության աչքի առաջ, ժողովուրդը ինձ տեսել ա, շփվել ա, ով ինչ խնդիր ունեցել ա՝ դիմել ա, անկախ նրանից՝ դա դրական ա լուծվել, թե բացասական՝ ես կարողացել եմ լսել քաղաքացու խնդիրը: Ինչ վերաբերում ա ԱԺ-ում աշխատելուն, կարծում եմ՝ որեւէ մեկը չի ժխտի, որ ես ակտիվ եմ աշխատել՝ թե մամուլի հետ, թե հեռուստատեսության, տարբեր կազմակերպությունների հետ տարբեր քննարկումների ժամանակ: Ես ուզում եմ, որ ժողովուրդն այսօր գնահատի իմ այն ժամանակվա աշխատանքը՝ ընդունե՞լ ա, թե՞ չէ: Ոչինչ չանելով ես չէի կարող, չէ՞, իմ գնահատականը ստանայի: Հո չեմ կարող գնալ ընտրությունների ու ասել՝ ժողովուրդ, ես ոչինչ չեմ արել, ինձ ձայն տվեք, որ գնամ, էլի ոչինչ չանեմ: Արել եմ այն, ինչքան որ կարողացել եմ, պատկերացրել եմ՝ իմ լիազորությունների մեջ:

- Իսկ Դուք հիշո՞ւմ եք՝ քանի օրենսդրական նախաձեռնության հեղինակ եք:

- Կոնկրետ չեմ հիշում, բայց մասնակցել եմ: Ազգային ժողովի սայթում նայեք՝ կտեսնեք: Բայց որ պետաիրավական հանձնաժողովի բոլոր նիստերին մասնակցել եմ, շատ ակտիվ բոյկոտել եմ այն խնդիրները, որոնք գտնում էի, որ սխալ են՝ հաստատ ա: Օրինակ՝ պետական շահի հանդիսացող խնդիրները: Ես ասում էի, որ մարդկանց պետք ա զգուշացնեք, հինգ տարի հետո նոր իրենց բնակարաններից դուրս գան, ոչ թե՝ կառավարությունը էսօր որոշում ընդունի, մարդուն ասենք՝ երկու ամսվա ընթացքում դուրս արի: Դրանով խախտում ենք, չէ՞, մարդու իրավունքները: Մարդը բնակարանը վերանորոգեց, ծախս արեց, երկու ամսից ասեցին՝ պետական շահ ա... Ավանդների վերադարձման հետ կապված շատ ակտիվ եմ եղել: «Օրինաց երկրի» հետ կապված շատ հարցերում, գիտեք, համաձայն չէի, բայց կոնկրետ ավանդների հարցում իրենց հետ էի: Նիստերին չէին մասնակցում, որ էդ օրենսդրական նախաձեռնությունը չանցնի: Բայց կոնկրետ ես մասնակցում էի՝ անկախ էն բանից, թե իմ գործընկերները ոնց էին նայում: Բայց ՕԵԿ-ի դեմ միտինգ էլ էինք անում, ասում էինք՝ նախագահից ներողություն խնդրի կամ կատարի քո տված խոստումը: Բանավեճերը բազմաթիվ են եղել, ժողովուրդը պետք ա որոշի: Հիմա մեզ մոտ ո՞նց ա. ընտրությունը լինում ա, ժողովուրդը ձայնը տալիս ա, ընտրության մյուս օրվանից իր ձայնին տեր չի կանգնում: Հըլը էդքան քաղաքակրթված չենք: Ժողովուրդը մտածում ա՝ մեկ էլ մի հինգ տարի հետո կգան, դուռը կծեծեն, լայն կժպտան, կասեն՝ մորքուր կամ հոպար, արեք մեզի ձայն տվեք, մենք լավն ենք: Բայց երբ էդ ինստիտուտը սկսի գործել, ու ժողովուրդը սկսի վերահսկողություն իրականացնել ցանկացած պատգամավորի նկատմամբ՝ շատ շատերը կփախնեն, չեն ցանկանա մտնել էդ ծանրության տակ: Մյուս կողմից էլ՝ հիմա հինգ տարի առաջվա ընտրությունը չի, մարդիկ քաղաքականապես զարգացել են, շատ ժլատ են դարձել իրենց ձայների առումով, երբեք հենց էնպես տեղը ձայն չեն տա: Խոսքը կաշառքին չի վերաբերում, այլ համոզմունքին:

- Իշխանության ներկայացուցիչներն ասում են, որ սահմանափակելու են օլիգարխների մուտքը ԱԺ. դա Ձեզ չի՞ կաշկանդում:

- Ես էլ ամեն ինչ անելու եմ, որ միլիցիաների մուտքը սահմանափակեմ, որովհետեւ գտնում եմ, որ միլիցիայի աշխատողները իրավունք չունեն գնալու ԱԺ: Դա ի՞նչ ա նշանակում:

- Մեր Սահմանադրությունն է էդպես պահանջում՝ գործարարը չպետք է օրենսդիր աշխատանքով զբաղվի:

- Սեփականություն ունեցող մարդը կարող է, ոչ թե ինքը դառնա գործադիր տնօրեն:

- Այսինքն՝ Դուք ձեզ օլիգարխ չե՞ք համարում:

- Տո չէ, օլիգարխ դառնալու համար ես անպայման պետք ա լինեմ պետության բարձրաստիճան մարդկանց հովանավորյալը: Դուք էլ լավ գիտեք, որ մենք ոչ մեկի «կռիշի» տակ ոչ եղել ենք, ոչ էլ կլինենք: Աշխատող մարդը, հասարակ մարդը ո՞նց կարող ա լինի օլիգարխ: Օլիգարխը շատ բարդ, շատ խորը իմաստ ունեցող բան ա, մի քանի հատոր կարելի ա գրել էդ մասին:

Ես ութ տարի պատգամավոր եղել եմ, լավ գիտեմ՝ էդ ինչ բան ա: Իմ կյանքի նպատակը չի անպայման պատգամավոր լինել, պարզապես իմ կյանքի փորձը, որը ձեռք եմ բերել, ցանկանում եմ իմ հետ տանել խորհրդարան: Էդ ժելեած մազերով երիտասարդներին, որ ցանկանում են բերել խորհրդարան, գոնե դրանց մենք դասախոսություն կարդանք, բացատրենք՝ ի՞նչ բան ա:

Էսօր մեր պետության հեղինակության խնդիրն ա, պետք ա ամեն ինչ անենք, որ ընտրությունները անցնեն արդար, որպեսզի դրանից հետո շահարկումներ չառաջանան: Ես կողմնակից չեմ կեղծիքով ԱԺ-ում հայտնվելուն, ինձ նման բան պետք չի:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Սովածները կուշտին երբեք ձայն չեն տա»



Երեկ ՀՀԿ խմբակցության անդամ Լեռնիկ Ալեքսանյանը մեկնաբանելով ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանի այն հայտարարությունը, որ ՀՀԿ-ն թալանչիների եւ բանդիտների կուսակցություն է՝ նշեց, որ չի կարելի ամբողջ իշխանության համակարգը անվանել թալանչիներ՝ առանց հիմնավորելու. «Ես չեմ զարմանում, չեմ զայրանում, չեմ էլ ուզում մեկնաբանել, դա նորություն չի: Ես չեմ ընդունում ծայրահեղությունները, որ մի կողմում հրեշտակներ են, մյուս կողմում՝ սատանաներ, չկա նման բան: Բոլոր կուսակցություններում էլ կան կարգին մարդիկ, կան թալանչիներ: Ամեն տեղ էլ այդ գնահատականը պետք է ճիշտ տալ՝ պետք է սատանային սատանա ասել, հրեշտակին՝ հրեշտակ»:

Մինչդեռ ՀԱԿ անդամ Գուրգեն Եղիազարյանի մեկնաբանությամբ՝ Զուրաբյանի խոսքը չի վերաբերում նրանց, ովքեր պարկեշտ են. «Խոսքը վերաբերում է հետեւյալին՝ չէ՞ որ այսօր իշխանությունները վարչապետի բերանով հայտարարում են, որ մեր ազգաբնակչության 30%-ը սոված է, մինչեւ 55% կիսասոված մարդիկ կան, այդ 30-ի 15%-ն էլ ծայրահեղ սոված են: Մեր տան ներքեւում հինգ աղբարկղ է շարված, երկու տարի առաջ ամեն աղբարկղի վրա մեկ սոված էր, այսօր մեկի վրա կռիվ են անում երկու մարդ: Մեր տվյալներով՝ 60-70%-ն է սոված, բա Լեւոն Զուրաբյանը չասի՞, որ թալանում են»:

Գուրգեն Եղիազարյանի հաշվարկներով՝ ՀՀԿ-ն հազիվ 10% ձայն կհավաքի, որովհետեւ մնացածը սոված են, իսկ սովածները կուշտին երբեք ձայն չեն տա:

Լեռնիկ Ալեքսանյանը չժխտեց, որ այսօր թալանում են, բայց, ըստ նրա, դա այսօրվա բան չէ, երեկվա բան չէ. «Այդ տեխնոլոգիաները գալիս են հնից: Մենակ հանրապետականնե՞րն են թալանում»:

Խոսելով ազատ, արդար ընտրություններ անցկացնելու հավանականության մասին՝ ՀՀԿ ներկայացուցիչն ասաց, որ եթե բոլոր կուսակցություններն իրենց տեղերում լինեն, տեր կանգնեն իրենց տեղերին՝ ընտրությունները չեն կեղծվի. «Բոլորս էլ եղել ենք ընտրություններին եւ գիտենք, որ ընդդիմադիր կոչվածներն իրենց տեղերը հանձնաժողովներում, իրենց վստահելի անձանց փողով ծախում են, եւ եթե իրենց կազմակերպվածությունը գնա ոչ միայն իշխանությանը վարկաբեկելու, այլեւ տեղում լինելու, տեր կանգնելու իրենց ձայներին, ես դրա կողմնակիցը կլինեմ»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

## «Նախագահը կոռուպցիոն բուրգի վերեւում չէ»

«Նախագահի հասցեին ավելի կոռեկտ արտահայտություններ արեք, որովհետեւ նա կոռուպցիոն բուրգի վերեւում չէ, նա երկրի նախագահն է»,- երեկ «Կոնգրես» հյուրանոցում հրավիրված քննարկման ժամանակ ՀԱԿ ներկայացուցիչ Զոյա Թադեւոսյանին կոչ արեց ՀՀԿ ներկայացուցիչ Արա Հովհաննիսյանը: Զ. Թադեւոսյանն էլ ի պատասխան ասաց. «Ես չեմ համարում, որ Սերժ Սարգսյանը հանրապետության նախագահն է, որովհետեւ 2008 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ էի եւ չեմ արձանագրել, որ նա հանրապետության նախագահն է: Պաշտեք ձեր պաշտամունքի առարկային, ինձ համար պաշտամունք է նա, ով հայրենիք է սիրում»:

Ինչ վերաբերում է Հանրապետական պատգամավորի բնորոշմանը, թե ժողովուրդը թերահավատ է, Զ. Թադեւոսյանն ասաց. «Ցույց տվեք փաստեր տնտեսական աճի, բիզնես ազատության, օգնությունների արդյունավետ բաշխման, բյուրոկրատական աշխատանքի արդյունավետ արդյունքների մասին, եթե կասեք՝ ատրեք դուք: Թե չէ՝ էլեկտրոնային միջոցներում տեղադրված տեղեկատվությունը համարել կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ արդյունքներից մեկը՝ առնվազն ծիծաղելի է»:

ՀՅԴ ներկայացուցիչ Բագրատ Եսայանն էլ էլեկտրոնային կառավարման արդյունավետության վերաբերյալ կարծիք հայտնեց. «Մենք փորձեցինք նախարարությունից երիտասարդական ծրագրերի վերաբերյալ տեղեկանալ, թե տրամադրված 200 մլն դրամները ինչ ծրագրով են իրականացրել: Մեզ պատասխան է գալիս՝ մեր էլեկտրոնային կայքէջում ամեն ինչ դրված է: Ամեն ինչ այնքա՞ն են բարդացրել»:

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Հայաստանի թռչնաբույծներն ահազանգում են

**Շուկայում առկա են տեղական թարմ թռչնամթերքի անվան տակ փաթեթավորված ու մակնշված, սակայն իրականում ներկրված, սառեցրած-հալեցրած, տարբեր տեխնոլոգիաներով վերամշակված ու վերափաթեթավորված հավեր ու ժամկետանց ձվեր:**

«Առավոտի» խմբագրություն են դիմել Հայաստանում թռչնամթերքի արտադրությամբ զբաղվող որոշ ընկերությունների ղեկավարներ, որոնք նաեւ Թռչնաբույծների միության անդամներ են՝ խնդրելով լուսաբանել իրենց ոլորտում առաջացած լուրջ խնդիրները, որոնք, ըստ թռչնաբույծների, առաջացել են որոշ ընկերությունների կողմից թույլ տրված անթույլատրելի գործունեության հետեւանքով: Թռչնաբույծները հավաստիացնում են, որ իրենց հուզող հարցերի մասին ահազանգել են բոլոր պատկան մարմիններին՝ դեռեւս նոյեմբեր ամսին՝ ՀՀ վարչապետին, Սննդի անվտանգության տեսչությանը, ՏՄՊՊՀ-ին, գյուղնախարարին, սակայն իրենց բարձրացրած հարցը մինչ օրս մնացել է անլուծելի: Իսկ մինչ պետական այրերը չեն կարեւորում թռչնաբույծների խնդիրները, վերջիններս նվազեցնում են իրենց արտադրության ծավալները, ոմանք էլ արդեն քայլեր են անում Վրաստանում նոր շուկաներ գտնելու ուղղությամբ, քանի որ այնտեղ, ըստ գործարարների, տնտեսական դաշտը բարենպաստ է բիզնես զարգացնելու համար: Իսկ որոշ անբարեխիղճ ներկրողներ ու արտադրողներ շարունակում են իրենց շուկայական դիրքերն ընդլայնելու եւ ոլորտում մենաշնորհի ձեռք բերելու նպատակով շուկայում ստեղծել անկայուն իրավիճակ, եւ որ ամենավտանգավորն է, ազգաբնակչությանը թյուրիմացության մեջ գցելով՝ ներմուծված կասկածելի ծագման ու ժամկետի թռչնամթերքը տեղական շուկայում իրացնել որպես տեղական թարմ հավեր ու ձվեր՝ ոտնահարելով թե սպառողի շահերը, թե վտանգելով նրա առողջությունը («Առավոտն» առաջիկայում կանդրադառնա այն տեխնոլոգիաներին, թե ինչպես են ներմուծված՝ սառեցրած հավերը Հայաստանում «թարմացվում» եւ «քաղաքացիություն» ստանում):

Բոլորիս հայտնի են վերջին երկու տարիներին ձվի շուկայում ստեղծված մրցակցային անառողջ երեւույթների ծանր հետեւանքները, երբ մենաշնորհային դիրք ունեցողները գնային անտրամաբանական վայրիվերումներով ու քաղաքականությամբ ստեղծեցին շուկայական անկայուն վիճակ, ինչի հետեւանքով ձու արտադրող ընկերությունները հարկադրված մորթեցին ածան հավերի զգալի գլխաքանակ: Դրա հետեւանքով առաջացավ ձվի դեֆիցիտ, որը լրացնելու համար Հայաստանը սկսեց ներմուծել անհայտ որակի եւ ժամկետի մեծ քանակությամբ ձու: Փաստորեն, ձու արտադրող հանրապետությունը դարձավ ձու ներկրող: Հիշեցնենք, դա այն պայմաններում, երբ մեր պետական այրերը առիթ-անառիթ խոստումներ ու հույսեր են տալիս, թե պետք է զարկ տանք տեղական արտադրանքին, ստեղծենք տնտեսական մրցակցային հավասար պայմաններ, նոր աշխատատեղեր, զարկ տանք մանր ու միջին ձեռնարկատիրությանը:

Այսօր նման անկման վտանգի առջեւ կանգնած է նաեւ թռչնաբուծության՝ հավի մսի արտադրությունը: Շուկայում առկա տեղական թռչնամթերքի վրա արտադրողները ներդրումներ են կատարում՝ սկսած կերի ձեռք բերումից մինչեւ գազի, էլեկտրաէներգիայի, աշխատավարձի եւ այլ ծախսեր, որոնք ստեղծում են արտադրանքի շուկայական արժեքը, ինչն էլ պայմանավորում է դրա վաճառքի գինը: Սրանց կողքին խանութների ցուցափեղկերին են հայտնվում դրսից էժան գնով ներմուծված ձվեր եւ հավեր, որոնք ունեն կասկածելի որակ եւ ծագում, պիտանելիության անհայտ ժամկետ, սակայն՝ տեղական փաթեթավորմամբ եւ մակնշմամբ ու ավելի էժան: Հայաստանյան սպառողների սոցիալական վիճակը թելադրում է, որ անգամ 50-100 դրամը կարող է նշանակություն ունենալ, եւ սպառողի ընտրությունը կանգ է առնում էժան՝ «թարմ, տեղական» հավի վրա: Արդյունքում՝ «իմպորտնին» տեղականի տեղ լայնորեն սպառվում է, իսկ մեր իսկական տեղական հավերը մնում են ցուցափեղկերին, տուժում է տեղական արտադրողը եւ հարկադրված նվազեցնում իր արտադրական ծավալները: Ներկայացնենք որոշ թվային փաստեր. «Գետամեջի» թռչնաֆաբրիկան վերջին ամիսներին արտադրական ծավալները օրական 10 տ-ից իջեցրել է 6 տոննայի, ԼՂՀ-ի «Լուսակերտը» 2,5 տոննայից իջեցրել է 1,5 տոննայի: «Շիրակը» եւ «Լուսակերտը» նույնպես իջեցրել են իրենց արտադրական ծավալները: Ժամանակավորապես դադարել են գործել թռչնամիս արտադրող փոքր ու միջին որոշ ընկերություններ: Ընդհանուր առմամբ, հայաստանյան թռչնաբուծության բնագավառում աշխատում է 8000 մարդ, որոնց զգալի մասը կանգնած է գործազրկության ճիրաններում հայտնվելու վտանգի առջեւ:

Փաստորեն, չնայած այն բանին, որ ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ աշխարհում տարեցտարի աճում են հավի մսի պահանջարկն ու սպառումը, մեր հանրապետությունում այդ արտադրությունը կանգնած է կործանման եզրին: Թռչնաբույծների ներկայացրած տվյալներով՝ Հայաստանում թռչնամսի սպառման միայն 25-26 տոկոսն է ապահովվում տեղական արտադրողը, մնացածը հայաստանցիները սպառում են արտերկրի ընկերությունների արտադրանքը: Ներկրված թռչնամսի 10-20 տոկոսը սպառվում է որպես տեղական «թարմ» միս: Փաստորեն, հայ սպառողին թյուրիմացության մեջ գցելով՝ որոշ ընկերություններ, ի շահ իրենց եւ ի վնաս մրցակիցների, նպաստում են արտերկրի արտադրության զարգացմանը: Մինչդեռ հայաստանյան թռչնարտադրողները համոզված են, որ ճիշտ տնտեսական քաղաքականության եւ հավասար մրցակցային պայմանների արդյունքում սպառվող արտադրանքի ներկրման թվային ցուցանիշը հնարավոր է փոխել՝ դարձնելով 20 տոկոս՝ մնացած 80 տոկոսը կապահովվի տեղական արտադրանքի հաշվին: Արդյունքում կզարգանա տեղական արտադրությունը, հայ սպառողը խաբված չի լինի. կուտի էկոլոգիապես մաքուր թռչնամիս, հանրապետությունում կավելանան աշխատատեղերը:

Թռչնաբույծները հավաստիացնում են, որ իրենց արտադրանքին չեն խանգարում ԱՄՆ-ից ներմուծվող սառեցրած հավի բդիկները՝ «Բուշի» բդիկները, որոնք մրցակից չեն տեղական որակյալ թռչնամսին եւ երկու անգամ ավելի էժան են ամբողջական սառեցրած հավերից: «Առավոտի» հարցին՝ թե գուցե հայաստանյան սոցիալապես անապահով սպառողներին ավելի ձեռնտու է 200 դրամով ավելի էժան՝ թեկուզ անորակ թռչնամիս գնելը, թռչնաբույծները պատասխանեցին, որ այդ 200 դրամով էժանը ժամանակավոր բնույթ է կրում: Եթե իրենք իջեցնեն իրենց արտադրանքի գինը, ապա կաշխատեն վնասով: Այդ դեպքում հարկադրված են դադարեցնել արտադրանքը: Նման իրավիճակում համոզված են, որ ներկրող ընկերությունները, արդեն չունենալով մրցակցության մտավախություն, շեշտակիորեն կբարձրացնեն նաեւ ներկրած, սառեցրած-հալեցրած հավի մսի արժեքը: Արդյունքում՝ սպառողը արդեն այն կգնի այն նույն գնով, որով այսօր գնում է տեղականը: Հարկ է հիշեցնել, որ թռչնամիսը այն միակ մսատեսակն է, որի գինը, մյուս մսատեսակների նման, թռիչքային բարձրացում չի ունեցել, քանի որ թռչնաբույծները գերադասում են շահույթ ստանալ ոչ թե գնի բարձրացումից, այլ արտադրածավալի ավելացումից: Թռչնաբույծների համար խնդիր է նաեւ կերի տեղական բազայի բացակայությունը, որին եւ մյուս խնդիրներին ու դրանց լուծման առաջարկվող ուղիներին «Առավոտը» կանդրադառնա առաջիկայում:

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

R

## Մահացածներն այլեւս թոշակ չեն ստանա



«Այս տարվանից կենսաթոշակային համակարգում անճշտություններ չեն լինի»,- երեկ կայացած ասուլիսում վստահեցրեց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանը: Նա բացառեց Հայաստանից բացակայող կամ արդեն մահացած անձանց թոշակներ տրամադրելու հնարավորությունը. «Այս տարվա հուլիսից կունենանք բացարձակ ճշգրտությամբ կենսաթոշակային նոր տեղեկատվական բազա, որը թույլ կտա հստակ պատկերացում ունենալ, թե Հայաստանում քանի կենսաթոշակառու կա, ու ինչ տեսակի կենսաթոշակներ են ստանում»: Նախարարն ասաց, որ տեղեկատվական բազաները վերանայելուց հետո պարզել են, որ գրանցված մոտ 520.000 կենսաթոշակառուներից իրականում կա 509.000-ը:

Կենսաթոշակային համակարգը կարգավորելուց բացի՝ նախարարության այս տարվա առաջնահերթ ծրագրերից է նաեւ սոցիալական աշխատողի ինստիտուտ ստեղծելը. «Այսինքն՝ կենսաթոշակի, ընտանեկան նպաստի, գործազրկության, երեխայի ծննդյան նպաստի, հաշմանդամության եւ այսպիսի այլ ծառայությունները քաղաքացիները կստանան մեկ ընդունարանում: Որպեսզի ծառայությունները մատուցվեն որակով, ու վերանան քաշքշուկները, այս տարվանից հանրապետությունում նախատեսել ենք մոտ 15 սոցիալական ինտեգրված ծառայություններ»:

Երրորդ ու վերջին առաջնահերթությունը երեխաների իրավունքների պաշտպանությանն է վերաբերում. «Մանկատանը գտնվող այն երեխան, որը չպետք է լինի այնտեղ, այլ պետք է լինի իր ընտանիքում՝ պետք է վերադարձնենք ընտանիք»: Հենց դրանով է պայմանավորված «Զատիկ» մանկատան վերածվելը ցերեկային աջակցության կենտրոնի: Նախարարի խոսքերով՝ սոցիալապես անապահով կամ անօթեւան երեխաներն այստեղ 3 ամիս աջակցություն ստանալուց հետո կվերադառնան ընտանիք:

ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

## Խաղասրահ չէ՝ խաղահրապարակ է

**Բակերն այնքան են լցվել օրինական ու անօրինական կառույցներով, որ բնակիչները ամեն ազատ թիզը պահելու համար պատրաստ են ակտիվ պայքար մղել:**



Երեկ «Առավոտի» խմբագրություն էին ահազանգել Աբովյան փողոցի 19 եւ 21 շենքերի բնակիչները՝ հայտնելով, որ իրենց բակում արդեն մի քանի օր է՝ ակտիվ շինարարություն է իրականացվում: Բնակիչները մտավախություն ունեն, որ բակի հաշվին հերթական օբյեկտն է վեր խոյանալու, որն էլ, ըստ նրանց տեղեկությունների, «հեղինակավոր» մեկին է պատկանում: Բակի խոտածածկ տարածքը փակվել է կապույտ պաստառներով, իսկ դրա մյուս կողմում ցեմենտ-բետոն է շաղախվում: Բնակիչները ճշտել են, որ տարածքում մանկական խաղասրահ է բացվում, ինչը, նրանց կարծիքով, անընդունելի է: «Նախ՝ մեր բակում ֆուտբոլի դաշտ կա, եւ մենք ավելի շատ կողմ ենք, որ մեր երեխաները այդ դաշտում խաղան, մարզվեն եւ ժամանակ անցկացնեն, քան թե մեզնից գումար կորզեն եւ այցելեն այդ խաղատունը: Ո՞վ ասաց, որ երեխաների համար նախատեսված խաղատունը նույնքան վտանգավոր չէ, որքան մեծերի համար նախատեսվածը: Մենք չենք ցանկանում, որ այդ տարածքում որեւէ բան կառուցվի, մանավանդ, որ այն կանաչ գոտի է»,- «Առավոտի» հետ զրույցում նման դժգոհություն հայտնեցին այս բակի բնակիչները: Նրանց խոսքերով՝ եթե ինչ-որ բան են ուզում անել երեխաների համար, գոնե պետք է լողավազան կառուցեն, որից օգտվելը առողջարար կլինի. «Թե չէ՝ առանց այդ էլ երեխաներն ամբողջ օրը համակարգչի առաջ են անցկացնում»:

Երբ տարածքի բնակիչները փորձել են խոչընդոտել շինարարական աշխատանքները, նրանց պատասխանել են, որ գործ չունեն՝ ինչ-որ օլիգարխներ են այս ամենի նախաձեռնողները: Սակայն սա բնակիչներին չի կանգնեցրել, նրանք ստորագրահավաք են սկսել մանկական խաղասրահի կառուցման դեմ: Սա հիմք է հանդիսացել, որպեսզի երեկ առավոտյան Երեւանի քաղաքապետարանի աշխատակիցները կասեցնեն շինաշխատանքները՝ պարզելու համար, թե ինչն ինչոց է: Արդեն օրվա 2-րդ կեսին պարզվել է, որ այստեղ իսկապես մանկական խաղասրահ է կառուցվում, բայց ոչ այնպիսին, ինչպիսին պատկերացրել են բակի բնակիչները:

Երեւանի քաղաքապետարանի լրատվական վարչությունից այս առնչությամբ «Առավոտին» պարզաբանեցին, որ Աբովյան 19 եւ 21 շենքերի բակում իրականացվում է բակի բարեկարգման ծրագիր՝ կառուցվում է մանկական խաղահրապարակ. «Տեղադրվում են մանկական ճոճանակներ եւ տարբեր կարուսելներ եւ երեխաների ժամանցի համար նախատեսված գրեթե ամեն ինչ»:

Մեր մայրաքաղաքն այնքան է խեղդված քարաշեն կառույցներով, ու բակերը տեղի-անտեղի այնքան են ծանրաբեռնված տարատեսակ օբյեկտներով, որ բնակիչների աչքը խիստ վախեցած է, եւ անգամ մի թիզ ազատ գոտին պաշտպանելու համար մարդիկ պատրաստ են ակցիաներ անել, անկախ նրանից՝ կառույցն օրինական է, թե ոչ:

ԱՆՈՒՇ ԽԵՉՈՅԱՆ

Առավոտ daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 01.02.2012

# Կազմակերպությունը՝ դատարանի դեմ

## Դատավորը չգիտի՝ որոնք են հանրային նշանակության կազմակերպությունները

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ. դեկտեմբերին «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի եւ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի դեմ հայց էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան, քանի որ վերջիններս խախտել էին ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու իրավունքը: Սակայն 2012թ. հունվարի 23-ին եւ 26-ին ՀՀ վարչական դատարանը մերժեց «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի եւ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի դեմ ԻԱԿ-ի հայցերի ընդունումը այն պատճառաբանությամբ, թե նշված ընկերությունները հանրային նշանակության կազմակերպություններ եւ տեղեկատվություն տնօրինողներ չեն:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն ստանալու հարցմամբ 2011թ. նոյեմբերին դիմել էր «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին եւ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Վարդանյանին՝ խնդրելով հայտնել, արդյոք, այդ ընկերությունների կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց, ինչպես նաեւ տրամադրել ցանկ, թե ընկերությունների կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, եւ/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է: Այս հարցումներն անպատասխան մնալուց հետո ԻԱԿ-ը տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցումներ ուղարկեց «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին եւ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին: Կրկնակի հարցմանն ի պատասխան՝ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ից ստացվեց էլեկտրոնային պատասխան, ըստ որի՝ ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունը մակնշված է կազմակերպության արտադրանքի յուրաքանչյուր տուփի վրա, ինչպես նաեւ հետաքրքրող տեղեկությունները ստանալու համար հղում էր արված կազմակերպության կայքին: Սակայն ԻԱԿ-ի խնդրած տեղեկություններն առկա չէին ոչ կազմակերպության արտադրանքի տուփերի վրա, ոչ էլ կայքում: Ուստի, պատասխանը համարվել է անհիմն: Իսկ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ն Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կրկնակի հարցումը թողեց անպատասխան:




ՀՀ վարչական դատարանը (դատավորներ՝ Արծրուն Միրզոյան եւ Աղասի Դարբինյան) մերժելով Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հայցերի ընդունումը՝ պատճառաբանել է, որ նշված ընկերությունները ուղղակի հանդիսանում են շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առեւտրային) ընկերություններ, հետեւաբար «ներկայացված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից...»: Այլ կերպ ասած՝ դատարանը համարել է, որ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ն ու «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն հանրային նշանակություն չունեն:

Հայցի ընդունումը մերժած անտեղյակ դատավորներին տեղեկացնենք, որ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կայքում (http://competition.am/uploads/resources/Cucak_dominant_for_site_24_11-2011.pdf) տեղադրված է Հայաստանում ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների ցանկը, որում ներառված են նաեւ «Աշտարակ-Կաթ» եւ «Դուստր Մարիաննա» ընկերությունները: Իսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային շուկաներում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են հանրային նշանակության կազմակերպություններ եւ հանդիսանում են տեղեկատվություն տնօրինողներ:

Հայտնենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը պատրաստվում է բողոքարկել ՀՀ վարչական դատարանի որոշումները:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

### Մկրատով հարվածել է մեջքին

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական տարածքի ընդհանուր իրավասության դատարանում, դատավոր Մնացական Մարտիրոսյանի նախագահությամբ, երեկ շարունակվեց անչափահաս Արմեն Ադյանի նկատմամբ հարուցված քրեական գործի դատաքննությունը: Անչափահասը մեղադրվում է Նալբանդյան-50 շենքի բակում Գեւորգ Լազարովի եւ նրա ընկերների հետ վեճի բռնվելու, ապա իր մոտ եղած մկրատով (ըստ մեղադրանքի կողմի) Լազարովին ծանր մարմնական վնասվածք հասցնելու համար:

Արմեն Ադյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը քաղաքից չբացակայելու մասին:

### Կուսուցանեն նաեւ «Նոտարական էթիկա»

Հունվարի 27-ից ՀՀ արդարադատության նախարարի հաստատած ծրագրին համապատասխան՝ «ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտը» սկսել է նոտարի թեկնածուների ուսուցման դասընթացները: Դասընթացներին մասնակցում են նոտարական գործունեության ստաժավորում շանցած, նոտարի որակավորման քննության որակավորման վկայական ստացած անձինք: 3 ամիսներին կդասավանդվեն «Նոտարական էթիկան», «Նոտարական գործունեության եւ նոտարի իրավական դրության առանձնահատկությունները», «Նոտարիատի վերաբերյալ օրենսդրությունը», «Վարչական օրենսդրությունը», «Քրեական օրենսդրությունը»: Ուսուցման ավարտից հետո իրավաբանական ինստիտուտը 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին է ներկայացնելու դասընթացն ավարտած նոտարի թեկնածուների ցանկը: Նոտարի թեկնածուներին իրավաբանական ինստիտուտի կողմից տրվելու է համապատասխան վկայագիր:

Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՑՔ ԵՐԵՎԱՆԻՑ

### Սյունիքի մարզպետն առաջարկել է պատժել մեղավոր բժիշկներին

Այսօր Սյունիքի մարզպետարանում աշխատակազմի կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումները ներկայացրել են 2011թ. կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ: Մարզպետը վարչությունների կատարած աշխատանքը դրական գնահատելուց զատ, նաեւ մատնանշեց առկա թերությունները եւ հանձնարարեց ավելի ուշադիր լինել եւ շտկել դրանք: Մասնավորապես առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության աշխատակազմին հանձնարարեց պատժիչ քայլեր ձեռնարկել մանկական մահացության համար մեղավորություն ունեցող բժիշկների նկատմամբ: Առողջապահության բնագավառի պատասխանատուները տեղեկացրեցին, որ մանկական մահացությունը նվազագույններից է հանրապետությունում, բայց մարզպետը նշեց, որ կարելի է հնարավորն անել դրանցից խուսափելու եւ գրանցված նույնիսկ ցածր ցուցանիշը չունենալու համար եւ պատասխանատուներին հորդորեց անպայման պատժել մեղավոր բժիշկներին:

Առողջապահության ոլորտի պատասխանատուների կողմից ներկայացված հաշվետվության համաձայն՝ 2011թ.-ին մանկական մահացությունը կազմել է 8.1, իսկ պերինատալ մահացությունը՝ 14.8 պրոմիլ: «Մեղրիում 0-1 տարեկան երեխաների մահացության ցուցանիշն ամենաբարձրն է՝ 6 դեպք, նախորդ տարվա 1-ի փոխարեն, Կապանում 5 մահացություն է եղել՝ 2010թ.-ի 11-ի փոխարեն, Քաջարանում 1 դեպք, ինչպես եւ անցած տարի, Գորիսում 4 դեպք գրանցվել էր 2010-ին, 2011-ին մահեր չեն եղել, Սիսիանում 1 մահացություն է եղել նախորդ տարի, իսկ 2010-ին Սիսիանում ոչ մի դեպք չէր արձանագրվել: 2011 թվականին մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհաստատություններում ծնվել է 1537 երեխա, 270 (17.5%) դեպքում ծննդալուծումն իրականացվել է կեսարյան հատմամբ: Մարզում 2011 թվականին գրանցվել են 1604 (2010թ.՝ 1736) նորածիններ եւ մարզում ծնելիության ցուցանիշը կազմել է 10.5 պրոմիլե: Ծննդօգնությունը 96.5%-ով իրականացվել է մարզի բժշկական կենտրոններում: Բարձր ռիսկի 62 հղիներ հղիության ախտաբանական ընթացքի պատճառով ծննդօգնությունը 3-րդ մակարդակի բուժհաստատություններում կազմակերպելու եւ իրականացնելու նպատակով ուղեգրվել են Երեւան»,- տեղեկացնում են առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պատասխանատուները:

ՄԵՐԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

# Հրանուշ տատը Հրանտ Մաթեւոսյանի հերոսին է մարմնավորել

## Չնայած՝ Մաթեւոսյանից մի տող անգամ չի կարդացել

Լոռու մարզի Մոտկորի տարածաշրջանի Ահնիձոր գյուղի յուրաքանչյուր բնակիչ կամ Հրանտ Մաթեւոսյանի գրական կերպարն է, կամ համանուն գեղարվեստական ֆիլմում էպիզոդիկ դերակատար: 71-ամյա Հրանուշ Ղազարյանն էլ «Տերը» ֆիլմում մարմնավորել է իր համագյուղացու ամուսնության պատմությունը, սակայն, ժամանակ չունենալու պատճառով, Մաթեւոսյանից մի տող անգամ չի կարդացել: «Ես Հրանտ չեմ կարդացել, ծանոթ չեմ նրան, նրա գրվածքներին, միայն տեսել եմ դեմքով, բայց հետը խոսել չի հաջողվել»,- մեզ հետ զրույցում ասում է Հրանուշ տատը:



Հրանուշ Բարսեղյանը ծնվել է 1941թ. հուլիսի 22-ին: Իր կյանքում ունեցած անհաջողությունները բացատրում է չարագուշակ տարվա եւ օրվա ծնունդով. «Համ տարիս ա նահանջ, համ օրս ա նահանջ, համ էլ եթիմ եմ... դրա համար էլ բախտս շուռ եկավ»:

Ինչպես ինքն է պատմում, վեց ամսականում կորցրել է մորը: Նրա մայրը մահացել է սրտի կաթվածից. «Էն ժամանակ հիվանդությունից գլուխ չէին հանում»:

Ալավերդու հիվանդանոցում հարսին խնամելու համար, տատը փոքրիկ Հրանուշին թողնում է ճոճքի մեջ՝ եղբոր կնոջ հույսին: Տիկին Հրանուշի պատմելով, գործով տարված իրենց հարսը մինչեւ ուշքի է գալիս երեխայի լացի ձայնից, տեսնում է, որ երեխան կախվել է ճոճքից ու ցած է ընկնում: Նրան պահում է միայն թախտին հենվելը: Երեխայի ոտքերը դուրս են ընկնում խնձորակից, որը պարզվում է միայն քայլելու ժամանակ: «Տեսնելով, որ երեխեն լավ չի քայլում, տանում են սնխչու մոտ, բայց արդեն ուշ էր: Դուրս եկած խնձորակն իր տեղն արել էր, ու ես ամբողջ կյանքս այդպես էլ ինվալիդ մնացի,- պատմում է Հրանուշ տատը,- ինձ տատս մեծ դժվարությամբ է պահել»: Հայրը պատերազմից վերադառնալով՝ ամուսնանում է երկրորդ անգամ, ընտանիքն աճում է՝ քույր ու եղբայրներ: 8-ամյա կրթություն ստանալուց հետո, Հրանուշ Ղազարյանն աշխատել է գյուղի սովխոզում: Սակայն տարեցտարի նրա քայլելու հարցն ավելի է դժվարանում: 21 տարեկանում նա ամուսնանում է հարեւան Ահնիձոր գյուղում. «Համ ինվալիդ էի, համ եթիմ, լեզուս մի տեղ կարճ էր, հերս ասավ՝ կտամ, ճիշտ ա, խեղճ ընտանիք էին»: Նա այժմ 3 երեխա, 7 թոռ ունի եւ նրանցով է ապրում:

Քայլելու դժվարություններն անտեսելով՝ ամռան ամիսներին տնամերձ փոքրիկ այգով է զբաղվում, ձմեռվա համար պահածոներ պատրաստում: Սիրում է մեծ աշխարհի իր անկյունը, սակայն երազում է, որ իր թոռներն ավելի բարեկեցիկ կյանքով ապրեն:

ՆԵԼԼԻ ԴԱՎԹՅԱՆ

# Մենք պատասխանատվություն չենք կրում US News Report-ի չափանիշների համար

## Ասում է «Լույս» հիմնադրամի գործադիր տնօրենը

Վերջերս aravot.am-ին տված հարցազրույցում Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Հանս-Յոխեն Շմիդթը զարմանք էր հայտնել, թե ինչու «Լույս» հիմնադրամը ցայսօր կրթաթոշակներ չի տրամադրում գերմանական որեւէ բուհում սովորող հայ երիտասարդի:

«Գերմանական բուհերը բարձր մակարդակ ունեն եւ կցանկանային «Լույս» հիմնադրամի գործընկեր բուհ դառնալ»,- ասել էր դեսպանը:

Aravot.am-ը մեկնաբանություն խնդրեց «Լույս» հիմնադրամի գործադիր տնօրեն Ժաքլին Կարաասլանյանից: Տիկին Կարաասլանյանը ի պատասխան դեսպանի մտահոգության՝ հայտնեց. «Մենք մեծ հարգանք ունենք դեպի բոլոր բարձր մակարդակ ունեցող համալսարանները: Ամեն երկիր ունի իր լավագույնը, ուղղակի ցանկը որոշվում է «US News Report» կազմակերպության՝ բուհերի միջազգային վարկանիշների հիման վրա: Այն ճանաչում է աշխարհի 400 լավագույն համալսարանները, մեր սկզբունքն էլ այն է, որ ընտրում ենք առաջին 10-ը: Համաշխարհային այդ ընկերությանն ենք վստահել բուհերի ցանկը



կազմելը, պատճառն այն է, որ մենք չենք ուզում գնահատել՝ ով է առաջինը, ով՝ երկրորդը կամ երրորդը: Այդ որոշումը թողել ենք մասնագետ ընկերությանը, որը ամեն տարի ներկայացնում է 400 լավագույն բուհերը: Շատ հնարավոր է, որ մի տարի էլ, օրինակ՝ Իտալիայի կամ Գերմանիայի համալսարանները հայտնվեն 10-ի մեջ: Մենք ոչ մի կոնտրոլ չունենք, թե ինչպես է US News Report-ի լիստը հավաքվում, տեղյակ չենք իրենց չափանիշներից եւ դրա պատասխանատվությունը չենք կրում: Ու եթե գերմանական համալսարանները այդ ցանկում չեն, դա չի նշանակում, թե «Լույսը» չի հարգում Գերմանիայի կամ ուրիշ երկրների բուհերը: Ի դեպ, մեր այս տարվա ծրագիրը մեզ թույլ է տալիս երկրորդ ցանկ ստեղծել, որով հնարավոր է հատուկ համագործակցություն տարբեր երկրների հետ: Այստեղ մենք նախատեսում ենք համագործակցություն նաեւ Գերմանիայի հետ, որը քննարկում ենք այս պահին»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

### Ուրախ մտքերը բուժիչ են

Գիտնականների մեկնաբանմամբ՝ հանգիստ, ուրախ մտքերն ու իրադարձությունները օգնում են հիվանդներին իրենց առողջության վերաբերյալ առավել ճիշտ որոշումներ կայացնել. այս մասին գրում է «Daily Mail»-ը: Ըստ աղբյուրի, որոշ հետազոտությունների արդյունքներ փաստում են, որ քնից արթնանալուց հետո ինչ-որ ուրախ բանի մասին մտածելը բուժիչ նշանակություն ունի, դրա համար էլ խորհուրդ է տրվում, օրինակ, փոքրիկ երեխաների, ջերմ, արեւոտ օրերի, գեղեցիկ արեւածագի մասին մտածել:

Թեմայի վերաբերյալ «Առավոտը» զրուցեց հոգեբան Արմիդա Ալեքսանյանի հետ, որի փոխանցմամբ՝ արթնանալիս բարի լուրեր լսելը, գեղեցիկ տեսարաններ դիտելը ու նույնիսկ հարազատներին ժպիտով բարի լույս մաղթելը բավական է, որ մարդն ամբողջ օրվա ընթացքում ունենա լավ տրամադրություն: «Շատ կարեւոր է մարդու հոգեկան վիճակը, նաեւ քնելու ժամանակ: Լարված աշխատանքային օրվանից հետո, հոգնած, զայրացած վիճակներ ապրած մարդը գոնե քնելիս պետք է այդ ամենի մասին մոռանա: Ցավոք, մենք այդպես չենք վարվում. վատ տրամադրությամբ պառկում ենք քնելու, ամբողջ գիշեր գալարվում անկողնում, մղձավանջային երազներ տեսնում, արդյունքում՝ առավոտյան արթնանալիս ունենում ենք վատ տրամադրություն, հոգնած արտաքին: Խորհուրդ կտամ փոխել կենսակերպը: Հաճախ ժպտացեք: Զբոսնեք, թույլացրեք նյարդերը»,- ասում է Ա. Ալեքսանյանը՝ հավելելով, որ հիասթափությունները անցողիկ են:

Ե. ՀԱԿՈԲՅԱՆ

# Ցեղասպանագիտությունն այդքա՞ն գրավիչ է շահարկումների համար

Հունվարի 12-ին «Առավոտում» տպագրվեց «Հայաստանցի ցեղասպանագետները որեւէ ներդրում չունե՞ն» վերնագրով լուրը, որը տարվա սկզբին ԱՐՄԱԿԱԴ ցանցով տարածված Խաչիկ Գեւորգյանի հայտարարության վերաշարադրված տարբերակն էր: Խ. Գեւորգյանը ցեղասպանագիտական հարցերին նվիրված երկու ինդեքսավորվող եւ գրախոսվող միջազգային պարբերականներում հայաստանցի մասնագետների հրապարակումների բացակայությունը փորձում էր ներկայացնել որպես ահազանգող վիճակ հայրենական ցեղասպանագիտության մեջ ու տարակուսում՝ «որպես հարկատու, թե ո՞ւր եւ հատկապես ո՞ւմ են տրվում իմ եւ այլոց վճարած հարկերը՝ որպես աշխատավարձ»: Նա իրավիճակը շտկելու նպատակով նույնիսկ առաջարկում է դրամաշնորհ տրամադրել այդ ամսագրերում տպագրվելու համար:

Վերջին տարիներին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (ՀՑԹԻ) աշխատանքը, եւ թանգարանի միջազգային հեղինակության բարձրացումը հանգիստ չեն տալիս ոչ միայն թուրքերին կամ Հայոց ցեղասպանությունը ժխտողներին, այլեւ, ցավոք, նաեւ մեր որոշ հայրենակիցների, ովքեր բոլորովին էլ չեն թաքցնում իրենց ակնհայտ ու աներեւույթ չկամությունն ու խանդը: Հաճախ ականատես ենք լինում նմանատիպ պոռթկումների անսպասելի ու զավեշտալի դրսեւորումների: Այս դեպքը մեկն է այդ շարքից:



Հայկական ցեղասպանագիտության փրկչի կեցվածքով Խաչիկ Գեւորգյանի հանդես գալը համարում են ոչ մի բանով չհիմնավորված, իսկ մոտեցումները՝ անընդունելի եւ ակադեմիական գիտության հետ ոչ մի կապ ու առնչություն չունեցող պոպուլիստական գործելաոճ: Իսկ դրամաշնորհի հայտարարելը միջոց է ինչեղ թեմայի շուրջ գործարարներից գումար հայթայթելու համար:

Գիտական աշխատանքի չափումը երկու արտասահմանյան ամսագրերում տպվելու հանգամանքով համարում եմ պարզունակ ու անլուրջ մոտեցում: Եթե առաջնորդվենք այս նույն չափանիշով, ապա ՀՀ-ում ցանկացած գիտության ոլորտ կարող ենք սնանկ համարել: Ի դեպ, ՀՑԹԻ-ն այս տարվանից թողարկելու է հայաստանյան միջազգային գրախոսվող անգլալեզու հանդես՝ հենց ցեղասպանագիտության թեմայով:

«Հարկատուների գումարների փոշիացման» թեզը համարում եմ ոչ պակաս էժանագին հնարք: Նշեմ, որ մեր համեստ աշխատավարձը գնում է տարեկան հարյուր հազարավոր այցելուներ, այդ թվում տասնյակ հազարավոր օտարերկրացիներ ընդունելու, նրանց անվճար բացատրություններ ու գրականություն տալու համար: Հարկատուների գումարները գնում են գիտական ցուցադրությունը հարստացնելու, ժամանակավոր ցուցադրություններ կազմակերպելու, ինչպես նաեւ www.genocide-museum.am քառալեզու կայքը սպասարկելու համար, որն իր բովանդակությամբ Հայոց ցեղասպանության թեմայով համար մեկ կայքէջն է վիրտուալ տարածքում: Վկայությունը 2007 եւ 2011թթ. ստացած մրցանակներն են: Հարկերը գնում են ցեղասպանագիտական հազվագյուտ սկզբնաղբյուրների վերահրատարակմանը, նրանց թարգմանությանն ու գիտական հրատարակմանը: Հարկերը գնում են ամեն տարի մի քանի տասնյակ գիտական հոդվածների հրապարակմանը եւ միջազգային գիտաժողովների մասնակցությանն ու կազմակերպմանը:

Ի դեպ, ՀՑԹԻ-ն ամեն տարի հաշվետու ասուլիս է տալիս, իսկ այս տարի հրապարակել է իր հնգամյա գործունեության հաշվետվությունը, որը կարող ենք տրամադրել անհրաժեշտ հետեւությունններ անելու համար:

ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու,
ՀՑԹԻ փոխտնօրեն

# Ավիկ Իսահակյան. Պետք չէ չափել Արարատի բարձրությունը

Երեկ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում բացվեց «Հայ տպագիր գիրքը եւ հայ գեղարվեստական գրականությունը» թեմայով հանրապետական գիտաժողով: Զեկուցումները տարբեր էին՝ սկսած Գուտենբերգյան շրջանի հրատարակություններում մաշտոցյան գրերից, վերջացրած՝ երեխայի կյանքում հայ գրականության ու գրքի դերով:

Բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Դեւրիկյանը aravot.am-ի հետ զրույցում ներկայացրեց իր զեկուցումը, որը վերաբերում էր 16-18-րդ դարերում Հայ միջնադարյան տաղերին ու գանձերին:

«Հիմնականում տպագրվելով եվրոպական գաղթօջախներում՝ հայ գիրքը կրել է եվրոպական տպագրության ազդեցությունը: Ես զբաղվում եմ մի խնդրով, որով ցույց եմ տալիս հայ հնատիպ գրքի՝ մի կողմից հայ ձեռագրային ավանդների փոխանցականությունը, մյուս կողմից՝ եվրոպական տպագրության ազդեցությունը»,- նշեց պարոն Դեւրիկյանը՝ հավելելով, որ որպեսզի հնատիպ գիրքը ավելի ընկալելի լիներ ժամանակի մարդկանց համար, լուսանցազարդեր էին ավելացնում, տառերը ծաղկագիր դարձնում ու գունավորում էին: Այսինքն, ժամանակը փոխում էր գրքի կառուցվածքը եւ ավելացնում նոր շերտեր ու բովանդակություն:

Խոսելով ընթերցասիրության պակասի մասին, գրականագետը ցավով փաստեց. «Արեւմուտքում այսպիսի մի խոսք կա՝ ասում են գրքերն ու թերթերը ավելի շատ նայելու համար են, քան կարդալու»: Ինչ վերաբերում է հայաստանյան իրականությանը, ըստ Վ. Դեւրիկյանի, քիչ կարդալու պատճառները սրանք են. «Մարդիկ ավելի նախընտրում են չոր ինֆորմացիան, քան վերլուծությունները, հաջորդը վիզուալության, գրավչության հարցն է, եւ երրորդը այն է, ինչ ձեւակերպել է Չարենցը դեռեւս 20-րդ դարասկզբին՝ «Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակիդ շունչը դարձիր»: Միջնադարյան գրքի զարգացումը դիտարկելիս, տեսնում ենք, որ բոլոր փոխակերպումները պայմանավորված էին նրանով, որ ժամանակի ընթերցողի համար գրքերը գրավիչ եւ ընկալելի լինեին, այսօր էլ նույնը պետք է անենք: Նաեւ մարդիկ պետք է գիտակցեն, որ ինֆորմացիայի ու փաստերի տիրապետելուց բացի, հարկ է գեղարվեստական արժեքով վեհանալ»:

Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի տնօրեն Նարինե Թուխիկյանը մեզ հետ զրույցում նշեց, որ Թումանյանի անձնական գրադարանը գրեթե անկորուստ հասել է մեզ, ու այժմ թանգարանում 8150 միավոր գիրք կա. «Հետաքրքիր է ուսումնասիրել դրանք՝ նախ հասկանալու համար ընթերցող Թումանյանն ինչպիսին է եղել, հետո՝ որքա՞ն է այդ գրադարանը օգնել իր ստեղծագործական ընթացքին ու աշխարհայացքային ձեւավորմանը»: Տիկին Թուխիկյանը ցավով նշեց, որ այսօր գիրքը չի հերոսացվում ու քարոզվում, մինչդեռ ժամանակին Թումանյանը իր գրքերի մասին ասում էր. «Ոչ թե գրքեր են, այլ մեծ - մեծ մարդիկ, որոնք հետդ զրից են անում»:

Գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Ավիկ Իսահակյանը կարծում է, որ ազգային գրականությունը ժողովրդին ճանաչելու լավագույն բանալին է. «Ժողովրդին ճանաչելու համար պետք է ոչ թե չափես Արարատի բարձրությունը կամ Սեւանի խորությունը, այլ իմանաս նրա գրականությունը»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

VIVAcell MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Անի Ամիրաղյանն աշխարհում 535-րդն է



Կանանց թենիսի միջազգային ասոցիացիան (WTA) հրապարակել է պրոֆեսիոնալ թենիսիստուհիների վարկանիշային դասակարգման ցուցակը՝ հունվարի 30-ի դրությամբ:

Հայաստանի լավագույն թենիսիստուհի Անի Ամիրաղյանի անունը նշված է 535-րդ հորիզոնականում: Հիշեցնենք, որ Հայաստանի չեմպիոնուհին մրցաշրջան 2011-ին իր առջեւ նպատակ էր դրել մտնել աշխարհի 500 լավագույնների մեջ եւ այդ նպատակով անցած տարի մասնակցել մեր չափանիշներով կարեւոր մի շարք միջազգային մրցաշարերի: Մասնավորապես, ամռանը Իտալիայում նա գրավեց 2-րդ տեղը: Սակայն մյուս մեկնարկներում ծանրաբեռնվածությունը, հաճախակի ճանապարհներին գտնվելը եւ դրանց հետ կապված առողջական խնդիրները հայ մարզուհուն խանգարեցին մյուս մրցաշարերում հանդես գալ լրիվ կարողություններով եւ հասնել նպատակին:

Հիմա Անին նախապատրաստվում է առաջիկա մեկնարկներին եւ, ինչպես կիսվել է «Առավոտի» հետ, նպատակադրվել է 2012 թվականը եզրափակել 300 լավագույնների շարքում:

## Յուրի Մովսիսյանը Թուրքիայում դարձել է խաղի հերոս

Թուրքիայում ուսումնամարզական հավաքում գտնվող «Կրասնոդար» ֆուտբոլային ակումբը երեկ երեկոյան «11-ն ընդդեմ 11-ի» ձեւաչափով երկկողմանի խաղ է անցկացրել փոքրացված չափեր ունեցող տուգանային հրապարակներով խաղադաշտում:



«Սովետսկի Սպորտը» տեղեկացնում է, որ խաղի հերոս դարձել է Հայաստանի ազգային հավաքականի հարձակվող Յուրի Մովսիսյանը, որը «Կարմիրների» կազմում հանդես գալով՝ երեք գնդակ է անցկացրել «Դեղինների» դարպասը: Իսկ խաղն ավարտվել է 4:0 հաշվով:

## Մեկ ժամում՝ 1 միլիոն դոլար

Բելառուսցի թենիսիստուհի Վիկտորյա Ազարենկոն Ավստրալիայի բաց առաջնության կանանց մենախաղերի եզրափակչում 1 ժամ 20 րոպեում հաղթելով Ռուսաստանի թիվ մեկ ռակետ Մարիա Շարապովային՝ արժանացավ $1միլիոն 184 հազար 500 դրամական գլխավոր պարգեւին: Այսինքն, նա մեկ ժամից մի փոքր ավելի ժամանակում հարստացել է $1 միլիոնով: Իսկ պարզագույն հաշվարկը ցույց է տալիս, որ այդ օրը Վիկան մեկ րոպեում աշխատել է $16 հազար:



Նույնքան դրամական մրցանակի է արժանացել նաեւ տղամարդկանց մենախաղերի հաղթող, սերբ Նովակ Ջոկովիչը: Սակայն իսպանացի Ռաֆայել Նադալին հաղթելու համար նրանից պահանջվել է 5 ժամ 53 րոպե::

## Ռոման Բերեզովսկին երիտասարդացել է



Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի դարպասապահ Ռոման Բերեզովսկին պաշտոնապես խզել է կապերը «Խիմկիի» հետ եւ մտադիր է կարիերան շարունակել Մոսկվայի «Դինամոյում»: Նա պատրաստվում է մեկուկես տարվա պայմանագիր ստորագրել նոր ակումբի հետ:

«Իրադարձությունները շատ արագ շրջադարձ ունեցան, խոստովանել է 37-ամյա դարպասապահը «Սովետսկի Սպորտի» թղթակցի հետ զրույցում: Զգում եմ, որ պրեմիեր լիգա վերադառնալու հեռանկարը երիտասարդացրել է ինձ»: «Դինամո» ակումբից, սակայն, տեղեկացնում են, որ Բերեզովսկին դեռ պետք է բուժզննում անցնի: Եվ եթե արդյունքները դրական լինեն, նրա հետ մեկուկես տարվա պայմանագիր կստորագրվի:

## Գավաթի եզրափակիչը՝ Գյումրիի «Քաղաքային» ստադիոնում



ՀՖՖ մամուլի քարտուղարությունը տեղեկացնում է, որ ապրիլի 29-ին նախատեսված ֆուտբոլի Հայաստանի գավաթի 2011-2012թթ. խաղարկության եզրափակիչ հանդիպումը կկայանա Գյումրիի «Քաղաքային» ստադիոնում: Ֆեդերացիայի մրցումների կազմակերպման եւ անցկացման բաժինը ՀՖՖ պաշտոնական կայքին տեղեկացնում է նաեւ, որ նույն օրը կայանալու է հանրապետության երկրորդ քաղաքի վերանորոգված ստադիոնի հանդիսավոր բացումը:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՄՇԱԿՈՒՅԹ

# Պետությունն առանց կրկեսի նույնն է, ինչ թագավորն առանց խեղկատակի

Օրերս Մարզահամերգային համալիրում կայացած Հայոց բանակի 20-ամյակին նվիրված համերգին Գերմանիայից հրավիրված էին նաեւ կրկեսի արտիստներ՝ աճպարարներ, Գինեսի քառակի ռեկորդակիրներ Սոս եւ Վիկտորյա Պետրոսյանները: Միջազգային մի շարք մրցույթների հաղթողները անցյալ տարի իրենց պարգեւներն ավելացրին եւս մեկով՝ Գերմանիայում կայացած «Սուպեր տաղանդ» մրցանակաբաշխության գլխավոր մրցանակով:



«Առավոտը» հանդիպեց կրկեսային ճանաչված Պետրոսյան ընտանիքի անդամների հետ: Վերջին անգամ Սոսն ու Վիկտորյան հայ հանդիսատեսին ներկայացել են 2008թ., երբ նշվում էր ընտանիքի հոր՝ անվանի ձեռնածու, Երեւանի կրկեսի գեղարվեստական ղեկավար Սոս Պետրոսյանի ծննդյան 60-ամյակը:

Հարցին՝ ինչո՞ւ հաճախ չեն լինում Հայաստանում, կրտսեր Սոս Պետրոսյանը նախ ուրախությամբ հայտնեց, որ այս այցելության ժամանակ ստացել է ՀՀ անձնագիր, հետո էլ հավելեց. «Շուրջ 20 տարի բնակվելով Գերմանիայում, մասնակցել ենք 11 միջազգային մրցույթների՝ արժանանալով գլխավոր մրցանակների, ելույթներ ունեցել 60 երկրում: Սա մեծ պատասխանատվություն է, երբ ամբողջ մի ազգ ես ներկայացնում: Մյուս կողմից՝ կրկեսի արտիստը չի կարող մի քանի տարի աշխատել նույն օջախում: Կրկեսը թատրոն չէ, որ ունենա հիմնական արտիստների խումբ: Օրինակ, ես եւ կինս ընտրել ենք աճպարարական ժանրի ամենաբարդ ձեւը՝ զգեստներն արագ փոխելը: Գրանցվեցինք Գինեսի ռեկորդների գրքում՝ 1 րոպեում 13 զգեստ: Հիմա աշխատում ենք նույն ժամանակում 15 զգեստ փոխելու ուղղությամբ: Բայց նույն համարը, ինչքան էլ այն ռեկորդակիր լինի, տարիներ շարունակ չես ցուցադրի նույն վայրում: Կարճ ասած՝ մենք ժանրը պահպանում ենք՝ անընդհատ այն կատարելագործելով ու հանդես ենք գալիս տարբեր կրկեսներում: Մինչեւ 2017թ. պայմանագրեր ունենք կնքած տարբեր կրկեսների հետ»:

Մեր զրուցակիցները ուրախությամբ նշեցին, որ 1962թ. հիմնադրված Երեւանի կրկեսի հիմնանորոգումից հետո՝ 2013թ. հոկտեմբերին, պարտավորվում են Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի իրենց ճանաչված կոլեգաների հետ ներկայանալ հայ հանդիսատեսին: «Հուսով եմ՝ 2014թ. մայիսին կիրականանա իմ ու հորս երազանքը՝ Երեւանում առաջին անգամ կանցկացվի կրկեսային արվեստի միջազգային փառատոն: Կրկեսային արվեստի միջազգային ասոցիացիան (կենտրոնական գրասենյակը Լոնդոնում է) արդեն տվել է իր համաձայնությունը»:

Հանրահայտ բրիտանական՝ «Պետությունն առանց կրկեսի նույնն է, ինչ թագավորն առանց խեղկատակի» ասացվածքի առիթով Վիկտորյան փաստեց, որ կան կրկեսի՝ աշխարհով մեկ սփռված տաղանդավոր հայ արտիստներ, սակայն Երեւանի կրկեսի եւ ոչ մի արտիստ վերջին 30 տարում չի արժանացել որեւէ կոչման կամ պարգեւի: Հավելեց նաեւ, որ հետեւելով հայաստանյան ԶԼՄ-ներին ու TV-ներին, նկատել է, որ հազվադեպ են հանդիպում կրկեսի այս կամ այն արտիստին կամ հայկական կրկեսին նվիրված անդրադարձներ: «Հայաստանում չկան կրկեսային տեսաբաններ: Փաստորեն, միայն սկեսրայրս է, ով Երեւանի Կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի պրոֆեսոր է եւ 1993թ. պաշտպանել է գիտական միակ թեզը՝ «Հայկական կրկեսի գեղարվեստական ավանդույթները»: Անդրադառնալով 2011թ. մոսկովյան հեռուստատեսությամբ «Փառքի րոպե» հաղորդման եզրափակիչ փուլին իրենց որդու՝ դարձյալ Սոս Պետրոսյանի մասնակցությանը, որտեղ նա հաղթող չդարձավ, ծնողները հպարտորեն նշեցին, որ Սոսը հենց անցյալ տարի ԱՄՆ-ում արժանացավ կրկեսային «Օսկարի»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ